Hack2Check՝ մեդիա և տեղեկատվական գրագիտության հեքքթոն

Hack2Check Hackathon 2024

Փաստերի ստուգման և մեդիագրագիտության լուծումներ՝ տեխնոլոգիաների միջոցով

Մասնակցության հրավեր

Առցանց հայտը լրացնելու վերջնաժամկետ՝ ս.թ. ապրիլի 30:

Հանրային լրագրության ակումբը (ՀԼԱ) հայտարարում է մեդիա և տեղեկատվական գրագիտությանն ուղղված նոր հեքքթոնի մասին:

Սիրելի հեքքերներ, մեդիա ոլորտի ներկայացուցիչներ. լրագրողներ, մեդիագրագիտության փորձագետներ, ՏՏ ոլորտի ներկայացուցիչներ. ստարտափերներ, ՏՏ անվտանգության մասնագետներ, ծրագրավորողներ, կրթության ոլորտի մեդիագրագիտության ուղղությամբ մասնագիտացած ներկայացուցիչներ, այս մրցույթը ձե՛զ համար է:

Մեծ ուրախությամբ հայտնում ենք ձեզ, որ 2024 թ. մայիսի 25-26-ին (մեկնարկ՝ մայիսի 25, 10:00, ավարտ՝ մայիսի 26, 18:00) տեղի է ունենալու «Hack2Check. մեդիա և տեղեկատվական գրագիտության հեքքթոն 2024» մրցույթը՝ փաստերի ստուգման, թվային անվտանգության և մեդիագրագիտության կարողությունների զարգացմանն ուղղված տեխնոլոգիական լուծումներով նախագծերի համար:

Հեքքթոնի լավագույն 3 գաղափարների հեղինակներին շնորհվելու է 13,200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ դրանք իրականացնելու համար:

Վայր

Հեքքթոնն անցկացվելու է ՀԲՐՄ գրասենյակում (Երևան, Մելիք-Ադամյան 2/2): Թիմերը տարածքում կարող են աշխատել 24 ժամ: Միջոցառման ընթացքում ապահովվելու է մասնակիցների սնունդը: Ճանապարհածախս կամ կեցության աջակցություն չի նախատեսվում: Մանրամասներ կներկայացվեն տեղեկատվական հանդիպումների ժամանակ, որոնց մասին հավելյալ կհայտարարվի:

Ի՞նչ կարող ես անել դու.

Առաջարկել տեխնոլոգիական լուծումներով այնպիսի գաղափար, որը կօգնի նպաստել մեդիա և տեղեկատվական գրագիտությանը ստորև թվարկված ոլորտներում, նպաստելով թիրախ խմբերի վարքագծային փոփոխությանը.

- Կրթական ոլորտ. նախակրթական և հանրակրթական,
- Ապատեղեկատվության, բարոզչության նույնականացում և դրանց դեմ պայքար,
- Թվային անվտանգության և ապահով առցանց միջավայրի մարտահրավերներ,

Նախքան մասնակցության հայտը լրացնելը, խնդրում ենք մանրամասն ծանոթանալ հեքքթոնի Տեխնիկական առաջադրանքին, որը կօգնի պատկերացում կազմել, թե ինչ խնդիրներ պետք է լուծեն առաջարկվող նախագծերը, որոնք են թիրախային

խմբերը, ինչպիսի թվային լուծումներն են խրախուսվելու, ինչ ուղղություններ ունի այս համատեքստում միջազգային փորձը: Փաստաթղթում ներկայացված են նաև հեքըթոնի դիմորդների ընտրության չափանիշները:

Տեխնիկական առաջադրանքը մշակվել է փորձագիտական ուսումնասիրության և քննարկումների հիման վրա, որին մասնակցել են հայաստանյան առաջատար մասնագետներ:

Դիմորդները կարող են առաջնորդվել, սակայն չսահմանափակվել փաստաթղթում ներկայացված դրույթներով:

Հեքըթոնին մասնակցության տարիքային շեմը 18-ն է:

Հեքըթոնն իրականացվելու է Հանրային լրագրության ակումբի կողմից՝ ԱՄՆ պետքարտուղարության Հանրային դիվանագիտության գրասենյակի դրամաշնորհի շրջանակում՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության հետ համագործակցությամբ (ՀԲԸՄ):

Այս նախաձեռնությանը միացել են նաև մեր գործընկեր կառույցները՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ), «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամն իր Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոններով, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը: Գործընկերների ցանկն ընդլայնվում է:

Հեքըթոնի նպատակը

Hack2Check հեքըթոնի նպատակն է խթանել Հայաստանում մեդիա և տեղեկատվական գրագիտության մարտահրավերների և քարոզչության դեմ պայքարի նորարար լուծումների մշակմանը՝ համախմբելով երիտասարդների, տեխնոլոգիական ոլորտի մասնագետների, կրթության մասնագետների և մեդիա փորձագետների:

Հեքըթոնը տևելու է 24 ժամ, որի ընթացքում անցկացվելու են փաստերի ստուգման և մեդիագրագիտության վերաբերյալ դասընթացներ տեղական և միջազգային առաջատար փորձագետների կողմից: Մասնակիցները մշակելու են տեխնոլոգիական գաղափարներ, որոնց դեմո տարբերակները ներկայացվելու են հեքըթոնի մրցատյանի գնահատականին:

Հեքըթոնի հատուկ հյուրն է լինելու ամերիկացի մեդիավերլուծաբան, Գերմանական «Մարշալ» հիմնադրամի ներկայացուցիչ, Hamilton 2.0 հարթակի հիմադիր և ղեկավար Բրեթ Շաֆերը, որն անդրադառնալու է ապատեղեկատվության և քարոզչության ժամանակակից դրսևորումներին՝ ներկայացնելով այս համատեքստում միջազգային լավագույն փորձը: Նա նաև մենթորական աջակցություն կցուցաբերի հեքըթոնի թիմերին:

Դեմո մակարդակը մշակելու, զարգացնելու և կյանքի կոչելու համար հեքըթոնի ընթացքում և դրանից հետո տեխնոլոգիական, մեդիա, փաստերի ստուգման, կրթության և լրագրության ոլորտի լավագույն մասնագետները մենթորական աջակցություն են ցուցաբերելու գաղափարների շուրջ աշխատող թիմերին և տրամադրելու են խորհրդատվություններ, որոնք կնպաստեն առավել կարիքահեն և առաջատար լուծում ստանալու գործընթացին:

Հեքըթոնի վերաբերյալ կկազմակերպվի տեղեկատվական հանդիպում, որին կկարողանան մասնակցել դիմորդները և հետաքրքրված անձինք: Տեղեկատվական հանդիպման վերաբերյալ հավելյալ տեղեկություն կտրամադրվի կազմակերպիչների կողմից ավելի ուշ:

Հետհեքըթոն. Հետհեքըթոնային շրջանում (3 ամիս) մրցանակ շահած թիմերը ստանալու են մենթորական աջակցություն: Մենթորներն ընտրվելու են ՀԲԸՄ-ի փորձագիտական ցանցից, ովքեր ամենամսյա պարբերական առցանց կամ անցանց հանդիպումների միջոցով աշխատելու են թիմերի հետ՝ տրամադրելով նախագծի կարիքներից բխող անհրաժեշտ աջակցություն: Ընտրված նախագծերի կայունությունն ու շարունակականությունն ապահովելու նպատակով կդիտարկվի դրանք ներդրողների, միջազգային դոնոր կազմակերպությունների, ՏՀՏ և մեդիա ոլորտի ներկայացուցիչների ներկայացնելու հնարավորությունը:

Հայտերը դիտարկվելու են ՀԼԱ և ՀԲԸՄ ներկայացուցիչների կողմից, որից հետո ընտրված մասնակիցները և թիմերը կծանուցվեն մանրամասների և հետագա քայլերի վերաբերյալ: Հայտի լրացման գործընթացի կամ հեքըթոնի վերաբերյալ հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել ՀԼԱ Ծրագրերի ղեկավար Խանում Գևորգյանի հետ՝ khgevorgyan@publicjournalism.am էլեկտրոնային փոստի միջոցով:

Հրավիրում ենք հետաքրքրված ԶԼՄ-ներին՝ տեղեկատվական աջակցության, ինչի արդյունքում հեքըթոնի իրազեկման նյութերը կներառեն լրատվամիջոցների տարբերանշաններն ու համապատասխան տեղեկություն:

****

«Hack2Check. մեդիա և տեղեկատվական գրագիտության հեքըթոն» ծրագիրը նպատակ ունի նպաստել նորարարական լուծումների զարգացմանը՝ մեդիա և տեղեկատվական գրագիտության բարելավման ու առցանց քարոզչության կանխարգելման գործում: Ներգրավելով երիտասարդների, ՏՏ ոլորտի մասնագետների, մեդիա աշխատողների և մասնագետների՝ ծրագիրը միտված է բարձրացնելու հասարակության տեղեկացվածությունը, վերացնելու և ի հայտ բերելու արդյունավետ լուծումներ, որոնք կզարգացնեն քննադատական մտածողությունը և դիմադրողականությունը քարոզչությանը: Մանրամասները հասանելի են ՀԼԱ կայքում՝ այստեղ:

Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Հանրային դիվանագիտության գրասենյակի դրամաշնորհի շրջանակում: Հայտարարության մեջ արտահայտված կարծիքները և եզրակացությունները պատկանում են ՀԼԱ-ին, և պարտադիր չէ, որ դրանք համընկնեն ԱՄՆ պետքարտուղարության կարծիքի հետ: